



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

20.01.2020թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/85

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Կ. Դրամբյանի (լիազորագիր տրված՝ 27.11.2019թ.)

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.05665)

քննելով «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 12.12.2019թ. ներկայացված (13.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/85 բողոք), պարզեցի հետևյալը.

#### **1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Խաչպար» ՍՊԸ-ն 12.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարություն է

հրապարակել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով բաց մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերով պահանջվող ապրանքների համար Հրավերի «Չափաբաժնի անվանումը» սյունակներում թիվ 5 – 10-րդ չափաբաժինների մասով գրված է միևնույն՝ «Ախտահանիչ նյութ» անվանումը, իսկ թիվ 12-րդ չափաբաժնի մասով գրված է «Լուծույթ լվացման» անվանումը:

Այդ անվանումները նույնությամբ գրված են նաև Հրավերի Հավելված 1-ի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի գնման առարկայի անվանումը սյունակների համապատասխան չափաբաժինների մասերով, իսկ նրանց ներկայացվող պահանջները ներառված են գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակներում, որտեղ այդ ապրանքների համար նշված մանրէասպան հատկությունների և կիրառման ոլորտների թվարկումները փաստում են, որ դրանցից թիվ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները նախատեսված են բուժկանխարգելիչ կազմակերպություններում բժշկական իրերի, մեծ և փոքր մակերեսների ախտահանման, նախամանրէազերծումային մաքրման համար, իսկ թիվ 9-րդ և 12-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները նախատեսված են ձեռքերի մաշկի հիգիենիկ և վիրաբուժական մաքրման ու լվացման համար:

Այդպիսի ապրանքները հանդիսանում են ախտահանիչ միջոցներ, որոնց կիրառումը ՀՀ բուժկանխարգելիչ կազմակերպություններում կատարվում է 2015թ. սեպտեմբերի 10-ի ՀՀ ԱՆ թիվ 48-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի հավելվածի համաձայն:

Դա փաստվում է նաև Պատվիրատուի Հրավերի Հավելված 1-ի թիվ 5-10-րդ չափաբաժինների մասերի Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակներում առկա «Պետք է ունենա .... նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ,.... » պահանջով, որը սակայն բացակայում է թիվ 12-րդ չափաբաժնի մասով:

Հրավերի Հավելված 1-ի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ -ի «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում թիվ 5, 6, 7, 8, 9, 10 և 12-րդ չափաբաժինների մասերով սյունակներում առկա են պահանջներ, որոնք հակասում են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին, և դրանով իսկ արգելք են հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ Օրենքի 7-րդ

հողված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 5, 6, 7, 8, 9, 10 և 12-րդ չափաբաժինների մասերով:

Հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի մասով՝

Հրավերի Հավելված 1-ի թիվ 5-րդ չափաբաժնի մասով Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում գնման առարկայի համար առկա են «Փաթեթավորումը. 1լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարայով: Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ, որի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով: PH-5,0-8,0: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս և մաշկի վրա քսվելիս պատկանում է 4-րդ դասի քիչ վնասակար նյութերին, որովայն ներթափանցելիս՝ 5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին, 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային ազդեցությունը (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները) և հակասնկային ազդեցությունը (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) մինչև 15 րոպեում: Կիրառման նպատակը. նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, երեքը մեկում միաժամանկ: Պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է հակաբակտերիալ վարակազերծումը (ներառյալ տուբերկուլյոզը) 15 րոպեում: Պիտանելիության ժամկետները ոչ պակաս քան արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին համապատասխանում են այդտեղ առկա պահանջները՝ բացառությամբ մեր կողմից առանձնացված «(Գուանիդինիի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%)» պահանջի, որը չի համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով «3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա» սահմանված պահանջներին և արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի մասով:

Հրավերի թիվ 6-րդ չափաբաժնի մասով՝

Հրավերի Հավելված 1-ի թիվ 6-րդ չափաբաժնի մասով Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում գնման առարկայի համար առկա են Փոշենման 5 կգ-անոց նյութ, ակտիվատորը - տետրաացետիլէթիլենդիամին 25 %, ակտիվիմեթիլբենզիլամմոնիումի քլորիդ 2.38 %, նատրիումի պերկարբոնատ 47 %, հավելյալ օժանդակ նյութեր, ջրածնային ակտիվության ցուցանիշը՝ PH-8-ից 10: Առանձնահատկությունները՝ չի ֆիքսում օրգանական ախտոտվածությունը, ագրեսիվ չէ մշակվող մակերեսների հանդեպ: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս պատկանում է 3-րդ դասի վնասակար նյութերին, մաշկի վրա քսվելիս՝ 4-րդ դասի քիչ վտանգավոր նյութերին: Հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ՝ ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները, հակավիրուսային ազդեցությունը՝ արտաընդերային և ընդերային հեպատիտները, հեպատիտ A, B, C, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները, ադենովիրուս, գրիպ, առիպիկ թոքաբորբ, հակասնկային ազդեցությունը՝ կանդիդա և դերմատոֆիտիա: Կիրառման նպատակը. նախատեսված է վիրահատական սարքավորման (սեղան, զոնդ, ռենտգեն) ախտահանման

համար:Պիտանելիության ժամկետները ոչ պակաս քան արտադրողի փակ տարայում՝ 2 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 1 օր: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին համապատասխանում են այդտեղ առկա պահանջները՝ բացառությամբ մեր կողմից առանձնացված Փոշենման 5 կգ-անոց նյութ, ակտիվատորը - տետրաացետիլէթիլենդիամին 25 %, ալկիլդիմեթիլբենզիլամմոնիումի քլորիդ 2.38 %, նատրիումի պերկարբոնատ 47 %, պահանջների, որոնք չեն համապատասխանում ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով <<3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա, սահմանված պահանջներին և արգելք են հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 6-րդ չափաբաժնի մասով:

Հրավերի թիվ 7-րդ չափաբաժնի մասով՝

Հրավերի Հավելված 1-ի թիվ 7-րդ չափաբաժնի մասով Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում գնման առարկայի համար առկա են հաբի քաշը 5գ., որում ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50%-ը: Որպես հավելյող նյութեր պարունակում է նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որոնք ապահովում են աշխատանքային լուծույթի ակտիվությունը առնվազն 5 օր: 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1.75 գ-ից ոչ պակաս: Հաբերը ինքնալուծվող են: Միջոցը օժտված է հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ: Աշխատանքային լուծույթի մինիմալ

ծավալը ոչ ավել, քան 2,5 լիտր է: Աշխատանքային լուծույթը միատարր է, չի պարունակում նստվածք, քլորին բնորոշ շատ թույլ հոտով է, աշխատանքային լուծույթը հիմնականում կիրառվում է վիրահատական տարածքներում մշակումների համար և չպետք է առաջացի տեսուղական և շնչառական օրգանների գոգոլվածություն: Պետք է լինի գործարանային փակ տուփերով: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին համապատասխանում են այդտեղ առկա պահանջները՝ բացառությամբ մեր կողմից առանձնացված <<...5գ., .... ոչ ավել քան 50%... 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1.75 գ-ից ոչ պակաս... Աշխատանքային լուծույթի մինիմալ ծավալը ոչ ավել, քան 2,5լիտր է: ...>> պահանջների, որոնք չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով <<3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա, սահմանված պահանջներին և արգելք են հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 7-րդ չափաբաժնի մասով:

Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնի մասով՝

Հրավերի Հավելված 1-ի թիվ 8-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում գնման առարկայի համար առկա են՝ ախտահանիչ միջոցը պարունակում է դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ (մինչև 84%) ազդող նյութ, ֆունկցիոնալ հավելումներ՝ ադիպինաթթու, նատրիումի կարբոնատ և բիկարբոնատ Հաբը կշռում է 3,4-3,5գ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5գ ակտիվ քլոր: Հաբերն ինքնալուծվող են: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը 7 օր

մեթոդական ցուցումների համաձայն պահպանման դեպքում/: Ախտահանիչ միջոցը ցուցաբերում է հակամիկրոբային ազդեցության գրամդրական և գրամբացասական բակտերիաների /ներառյալ տուբերկուլյոզի, ներհիվանդանոցային վարակների, անաէրոբ և հատուկ վտանգավոր ինֆեկցիաների՝ սիբիրյան խոց, ժանտախտ, խոլերա, տուլարեմիա/, սնկերի /այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտներ/, վիրուսների /այդ թվում է պոլիոմելիտ, ՄԻԱՎ, հեպատիտներ, թոչնի գրիպ, ատիպիկ թոքաբորբ, ադենովիրուս և այլն/: Տարբեր վարակների դեպքում ախտահանումը պահանջում է տարբեր ռեժիմներ: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին համապատասխանում են այդտեղ առկա պահանջները՝ բացառությամբ մեր կողմից առանձնացված <<.... Հաբը կշռում է 3,4-3,5գ, ... 7 օր ....>> պահանջների, որոնք չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով <<3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա» սահմանված պահանջներին և արգելք են հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնի մասով:

Հրավերի թիվ 9-րդ չափաբաժնի մասով՝

Հրավերի Հավելված 1-ի թիվ 9-րդ չափաբաժնի մասով Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում գնման առարկայի համար առկա են «Փաթեթավորումը. 1լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարա դիսպենսրով, տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5մլ, մեկ հիգենիկ մշակումը ոչ ավել քան 3մլ-մինչև 30վրկ., մեկ վիրաբուժական մշակումը ոչ ավել քան -6մլ - մինչև 90վրկ., մշակումից

հետո ձեռքերի վրացում չի պահանջում, 1լ նախատեսված է 333 հիգենիկ կամ 167 վիրաբուժական մշակման համար: Կիրառման նպատակը՝ ձեռքերի հիգիենիկ և վիրաբուժական մշակման համար: Բաղադրակազմը. դենատուրացված էթանոլ 60%-75%, իզոպրոպանոլի առկայության դեպքում՝ քանակը չգերազանցի 5%-ը, պարունակում է խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքստրոպիկ գել, մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝ օժտված բարձր թափանցելիությամբ, տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չպետք է պարունակի հոտավետ բաղադրիչներ: Ախտահանիչ նյութի pH-5,5: Թունավորության և անվտանգության ցուցանիշները՝ 4-րդ, 5-րդ դաս: Ախտահանիչ նյութը պետք է ունենա մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ: Պիտանելիության ժամկետը 3 տարի: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին համապատասխանում են այդտեղ առկա պահանջները՝ բացառությամբ մեր կողմից առանձնացված «... Բաղադրակազմը. դենատուրացված էթանոլ 60%-75%, իզոպրոպանոլի առկայության դեպքում՝ քանակը չգերազանցի 5%-ը, ...» պահանջների, որոնք չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով «3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա» սահմանված պահանջներին և արգելք են հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝



«Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 9-րդ չափաբաժնի մասով:

Հրավերի թիվ 10-րդ չափաբաժնի մասով՝

Հրավերի Հավելված 1-ի թիվ 10-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում գնման առարկայի համար առկա են «Փաթեթավորումը - 750 միլիլիտրանոց գործարանային փակ տարայով, ցողացրիչ անվտանգության փականով: Բաղադրությունը - Դիդեցիլդիմեթիլամոնիումիքլորիդ- 0,14%, պոլիհեքսամեթիլեն բիգուանիդիդրոքլորիդ- 0,096% և այլ հավելումներ, չպարունակի սպիրտ: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները), սնկերի (այդթվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) նկատմամբ և այլ մանրէների նկատմամբ: Հակաբակտերիալ ազդեցությունը՝ 3րոպե, հակավիրուսային ազդեցությունը՝ 5րոպե, հակատուբերկուլյոզային ազդեցությունը՝ 15րոպե: pH-5,0-7,0,: Նախատեսված է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, ստացիոնարներում, լաբորատորիաներում և այլն փոքր մակերես ունեցող առարկաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, բժշկական սարքավորումների (այդթվում՝ կուլեզներ) և այլ մակերեսների ախտահանման և մաքրման համար: Թունավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին համապատասխանում են այդտեղ առկա պահանջները՝ բացառությամբ մեր կողմից առանձնացված «.... Դիդեցիլդիմեթիլամոնիումիքլորիդ- 0,14%, պոլիհեքսամեթիլեն բիգուանիդիդրոքլորիդ- 0,096% ....>> պահանջների, որոնք չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով «3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված

միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:>> սահմանված պահանջներին և արգելք են հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 10-րդ չափաբաժնի մասով:

Հրավերի թիվ 12-րդ չափաբաժնի մասով՝

Հրավերի Հավելված 1-ի թիվ 12-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում գնման առարկայի համար առկա են «Բաղադրությունը՝ - լվացող բաղադրիչներ՝ լաուրամֆոկարբոքսիզիցինատ, սոդիում լաուրիլսուլֆատ, լինոլեաինաթթվի դիէթանոլամիդ պահպանող բաղադրիչներ՝ բենզիլ սպիրտ, նատրիումի բենզոատ խոնավեցնող բաղադրիչներ՝ գլիցերին պաշտպանող բաղադրիչներ՝ սուլֆոսուկցինատ և այլ հավելումներ: Չի պարունակում ալերգեն սուբստանցիաներ, տրիկլորան: Օգտագործման համար տարիքային սահմանափակում չկա, ամենօրյա օգտագործման դեպքում չի գրգռում մաշկը: Օգտագործվում է ինչպես ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ լվացման համար, այնպես էլ մարմնի լվացման համար: Օժտված է բակտերիոստատիկ և ֆունգոստատիկ ազդեցությամբ: Փաթեթավորումը - 1 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: Տարան դոզավորող պոմպով է, պոմպի մեկ սեղմումը 2մլ է: Պիտանելիության ժամկետը՝ 3 տարի:

1) Այստեղ առկա «Օգտագործվում է .... ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ լվացման համար» պահանջը փաստում է, որ պահանջվող այս ապրանքը հանդիսանում է բուժկանխարգելիչ կազմակերպության բուժանձնակազմի և հիվանդների ձեռքերի մաշկի հիգիենիկ և վիրաբուժական լվացման համար կիրառվող ախտահանիչ միջոց, որի համար նույնպես՝ ինչպես Հրավերի թիվ 5, 6, 7, 8, 9 և 10-րդ չափաբաժինների մասերով պահանջվող մյուս ախտահանիչ միջոցների համար, պարտադիր պայման է ՀՀ ԱՆ կողմից հաստատված մեթոդական հրահանգի առկայության պահանջը, սակայն այդ պահանջը տվյալ դեպքում բացակայում է:

Նման պահանջի բացակայությունը հիմք կարող է հանդիսանալ Հրավերի թիվ 12-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչված հնարավոր մասնակիցների կողմից առաջարկելու այնպիսի ապրանքներ, որոնք չեն ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ, ինչը արգելք կհանդիսանա Պատվիրատուի համար՝ այդ

ապրանքները կիրառելու բուժանձնակազմի և հիվանդների ձեռքերի մաշկի հիգիենիկ և վիրաբուժական լվացման համար, քանի որ դա կհակասի 2015թ. սեպտեմբերի 10-ի ՀՀ ԱՆ թիվ 48-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի՝ հավելվածի թիվ 1-ին, 2-րդ և 20-րդ կետերով սահմանված պահանջներին:

2) Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին համապատասխանում են այդտեղ առկա պահանջները՝ բացառությամբ մեր կողմից առանձնացված «Չի պարունակում .... տրիկլորան: ....» պահանջի, որը չի համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով «3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա, սահմանված պահանջներին և արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 12-րդ չափաբաժնի մասով, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Դիասոֆտ Բիո» անվանումով հականեխիչ լվացող միջոցի ազդող նյութ է հանդիսանում հենց «...տրիկլորան:.... » բաղադրիչը, ինչը հաստատված է ՀՀ ԱՆ 2016թ. մայիսի 18-ի թիվ 1510-Ա հրամանով:

Ընկերությունը հայտնել է, որ ղեկավարվելով Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ -ի ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով բաց մրցույթ Հրավերի ընթացակարգը թիվ 5, 6, 7, 8, 9, 10 և 12-րդ չափաբաժինների մասերով և խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը

չկայացած հայտարարելու մասին՝ ընթացակարգի թիվ 5, 6, 7, 8, 9, 10 և 12-րդ չափաբաժինների մասերով:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը փաստում և ապացուցում են, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2019թ. դեկտեմբերի 4-ի 1 որոշմամբ հաստատված Հրավերի Հավելված 1-ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակներում թիվ 5, 6, 7, 8, 9, 10 և 12-րդ չափաբաժինների մասերով առկա են այնպիսի պահանջներ, որոնք արգելք են հանդիսանում Ընկերության համար՝ Հրավերի թիվ 5, 6, 7, 8, 9, 10 և 12-րդ չափաբաժինների մասերով, իրականացնելու Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը:

Ընկերությունը ի լրումն ներկայացված բողոքի խնդրել է վերափոխել բողոքի պահանջը հետևյալ պահանջով՝ պարտավորեցնել «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով ընթացակարգում կատարելու փափոխություն՝ Հրավերի թիվ 5-10-րդ և 12-րդ չափաբաժինների մասերով՝ համապատասխանեցնելով Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 3-րդ մասերով սահմանված պահանջներին:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

## **2. «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ

մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»,

2-րդ կետի համաձայն

«Գնման առարկայի բնութագրերը

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Հրավերի թիվ 5, 6, 7, 8, 9, 10 և 12-րդ չափաբաժինների մասով գնման առարկայի տեխնիկական բնութագրերում առկա չեն այնպիսի պահանջներ, որոնք հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Տվյալ ընթացակարգում Պատվիրատուն նկարագրել է իր կարիքին համապատասխան գնման ենթակա ապրանքներ, մասնավորապես. քիմիական նյութեր՝ նախատեսված կոնկրետ նպատակի համար (ախտահանում, մանրէազեծում, լվացում): Հնարավոր չէ նկարագրել քիմիական նյութը առանց նշելու դրանցում պարունակվող քիմիական անվանումը, դրանց դոզաները և միացությունները: Նշված փաստի առիթով կից ներկայացնում ենք նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից 09.09.16թ. տրամադրված պաշտոնական գրությունը, որով հստակեցվել են ախտահանիչ նյութերի համարժեքության թվով 5 ցուցանիշներ:

Ինչպես «Խաչպար» ՍՊԸ-ն այնպես էլ, ցանկացած այլ հնարավոր մասնակից կարող է բարձրացնել նմանատիպ հարց, հայտարարել, որ իր կողմից ներկայացվող ապրանքի բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին և հրավերը դիտարկել որպես խտրական: Սակայն դա իրավացի պահանջ չի կարելի համարել, քանի որ նման դեպքում նույն ոլորտում կիրառվող աշխարհում գոյություն ունեցող բոլոր ախտահանիչ նյութերը պետք է դիտարկվեն որպես համարժեք փոխարինելի, առանց հաշվի առնելու դրանց կազմում ընկած քիմիական միացությունները, դրանց դոզաները, թունավորության աստիճանները և այլ պահանջները: Ախտահանիչ նյութերի ցուցանիշների

համարժեքության չափանիշները և դրանց վերաբերվող պահանջները ընտրում է Պատվիրատուն, այլ ոչ թե՝ Մասնակիցը: Այդ փաստի առիթով ներկայացնում ենք ՀՀ առողջապահության նախարարության 2017-12-05 թիվ ԼԱ/15034-17 գրությունը, որով պարզաբանվել է ախտահանչ նյութերի համարժեքության չափանիշների սահմանման իրավասությունը:

Բացի այդ, միայն այն տեղեկությունը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով ներկայացված պահանջներին, դեռ բավարար չէ հրավերի պահանջները խտրական համարելու համար:

Հրավերի 12-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերում ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգի առկայության պահանջ չներառելու վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Բողոքում մեջբերված սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը վերաբերում են բժշկական նշանակության արտադրատեսակներին, դրանց մշակմանը և մանրէազերծմանը: Հրավերով ներկայացված ապրանքի կիրառման նպատակը հետևյալն է «Օգտագործման համար տարիքային սահմանափակում չկա, ամենօրյա օգտագործման դեպքում չի գրգռում մաշկը: Օգտագործվում է ինչպես ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ լվացման համար, այնպես էլ մարմնի լվացման համար»: Այստեղ չպետք է արտադրատեսակը խառնել մարդու հետ: Ձեռքերի և (կամ) մարմնի հիգիենիկ լվացման նպատակով օգտագործվող «լվացող միջոցներ»-ի կիրառման համար Հայաստանի Հանրապետությունում առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ չի պահանջվում:

Ամփոփելով վերոնշյալ տեղեկությունները, Պատվիրատուն գտնում է, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը լիովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և ընկերության բողոքը հիմնավոր չէ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

**3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող**

**փաստերը**

ԳԲՔԱ-ՆԳ-2019/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիկան նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

5	Ախտահան իջ նյութ	<p>Փաթեթավորումը. 1լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարայով: Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի-ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևութային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ, որի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով: PH-5,0-8,0: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս և մաշկի վրա քսվելիս պատկանում է 4-րդ դասի քիչ վնասակար նյութերին, որովայն ներթափանցելիս՝ 5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային ազդեցությունը (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները) և հակամակային ազդեցությունը (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) մինչև 15 րոպետոմ: Կիրառման նպատակը. նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, երեքը մեկում միաժամանակ: Պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է հակաբակտերիալ վարակազերծումը (ներառյալ տուբերկուլյոզը) 15 րոպետոմ: Պիտանելիության ժամկետները ոչ պակաս քան արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:</p>
6	Ախտահան իջ նյութ	<p>Փոշենման 5 կգ-անոց նյութ, ակտիվատորը - տետրասցետիլէթիլենդիամին 25 %, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ 2.38 %, նատրիումի պերկարբոնատ 47 %, հավելյալ օժանդակ նյութեր, ջրածնային ակտիվության ցուցանիշը՝ PH - 8-ից 10: Առանձնահատկությունները՝ չի ֆիքսում օրգանական ախտոտվածությունը, ազդեցիվ չէ մշակվող մակերեսների հանդեպ: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս պատկանում է 3-րդ դասի վնասակար նյութերին, մաշկի վրա քսվելիս՝ 4-րդ դասի քիչ վտանգավոր նյութերին: Հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ՝ ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները, հակավիրուսային ազդեցությունը՝ արտաընդերային և ընդերային հեպատիտները, հեպատիտ A, B, C, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները, աղենսկիրուս, գրիպ, ատիպիկ թրքաբորբ,</p>

		<p>հակասնկային ազդեցությունը՝ կանդիդա և դերմատոֆիտիա: Կիրառման նպատակը. նախատեսված է վիրահատական սարքավորման (սեղան, զոնդ, ռենտգեն) փակ տարայում՝ 2 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 1 օր: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:</p>
7	Ախտահան իջ նյութ	<p>Հաբի քաշը 5գ., որում ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50%-ը: Որպես հավելյալ նյութեր պարունակում է նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որոնք ապահովում են աշխատանքային լուծույթի ակտիվությունը առնվազն 5 օր: 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1.75 գ-ից ոչ պակաս:</p> <p>Հաբերը ինքնալուծվող են: Միջոցը օժտված է հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ: Աշխատանքային լուծույթի մինիմալ ծավալը ոչ ավել, քան 2,5լիտր է: Աշխատանքային լուծույթը միատարր է, չի պարունակում նստվածք, քլորին բնորոշ շատ թույլ հոտով է, աշխատանքային լուծույթը հիմնականում կիրառվում է վիրահատական տարածքներում մշակումների համար և չպետք է առաջացի տեսողական և շնչառական օրգանների գոգովածություն: Պետք է լինի գործարանային փակ տուփերով: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:</p>
8	Ախտահան իջ նյութ	<p>Ախտահանիչ միջոցը պարունակում է դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ (մինչև 84%) ազդող նյութ, ֆունկցիոնալ հավելումներ՝ ադիպինաթթու, նատրիումի կարբոնատ և բիկարբոնատ Հաբը կշռում է 3,4-3,5գ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5գ ակտիվ քլոր: Հաբերն ինքնալուծվող են: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը 7 օր մեթոդական ցուցումների համաձայն պահպանման դեպքում/:</p> <p>Ախտահանիչ միջոցը ցուցաբերում է հակամիկրոբային ազդեցության գրամդրական և գրամբացասական բակտերիաների /ներառյալ տուբերկուլյոզի, ներհիվանդանոցային վարակների, անաէրոբ և հատուկ վտանգավոր ինֆեկցիաների՝ սիբիրյան խոց, ժանտախտ, խոլերա, տուլարեմիա/, սնկերի /այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտներ/, վիրուսների /այդ թվում՝ պոլիոմելիտ, ՄԻԱՎ, հեպատիտներ, թոչնի գրիպ, աստիպիկ թոքաբորբ, ադենովիրուս և այլն/:</p> <p>Տարբեր վարակների դեպքում ախտահանումը պահանջում է տարբեր ռեժիմներ: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:</p>
9	Ախտահան իջ նյութ	<p>Փաթեթավորումը. 1լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարա դիսպենսարով, տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5մլ, մեկ հիգենիկ մշակումը ոչ ավել քան 3մլ- մինչև 30վրկ., մեկ վիրաբուժական մշակումը ոչ ավել քան -6մլ - մինչև 90վրկ., մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում, 1լ նախատեսված է 333 հիգենիկ կամ 167 վիրաբուժական մշակման համար: Կիրառման նպատակը՝ ձեռքերի հիգիենիկ և վիրաբուժական մշակման համար: Բաղադրակազմը. դենատուրացված էթանոլ 60%-75%, իզոպրոպանոլի առկայության դեպքում՝ քանակը չգերազանցի 5%-ը, պարունակում է խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքստրոպիկ գել, մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝ օժտված բարձր թափանցելիությամբ, տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չպետք է պարունակի հոտավետ բաղադրիչներ: Ախտահանիչ նյութի pH-5,5: Թունավորության և անվտանգության ցուցանիշները՝ 4-րդ, 5-րդ դաս: Ախտահանիչ նյութը պետք է ունենա մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ: Պիտանելիության ժամկետը 3 տարի: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության</p>



		կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
10		Փաթեթավորումը - 750 միլիլիտրանոց գործարանային փակ տարայով, ցողացրիչ անվտանգության փականով: Բաղադրությունը - Դիդեցիլոլիմեթիլամոնիումիքլորիդ- 0,14%, պոլիհեքսամեթիլենբիզոլանիդիդիդրոքլորիդ- 0,096% և այլ հավելումներ, չպարունակի սպիրտ: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները), սնկերի (այդթվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) նկատմամբ և այլ մանրէների նկատմամբ: Հակաբակտերիալ ազդեցությունը՝ Յրոպե, հակավիրուսային ազդեցությունը՝ 5րոպե, հակատուբերկուլյոզային ազդեցությունը՝ 15րոպե: pH-5,0-7,0,: Նախատեսված է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, ստացիոնարներում, լաբորատորիաներում և այլն փոքր մակերես ունեցող առարկաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, բժշկական սարքավորումների (այդթվում՝ կուլեզներ) և այլ մակերեսների ախտահանման և մաքրման համար: Թունավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
12	Լվացող լուծույթ	Բաղադրությունը՝ - լվացող բաղադրիչներ՝ լաուրամֆոկարբոքսիլիցինատ, սոդիում լաուրիլսուլֆատ, լինոլեաինաթթվի դիթեանոլամիդ պահպանող բաղադրիչներ՝ բենզիլ սպիրտ, նատրիումի բենզոատ խոնավեցնող բաղադրիչներ՝ գլիցերին պաշտպանող բաղադրիչներ՝ սուլֆոսուլցինատ և այլ հավելումներ: Չի պարունակում ալերգեն սուբստանցիաներ, տրիկլորան: Օգտագործման համար տարիքային սահմանափակում չկա, ամենօրյա օգտագործման դեպքում չի գրգռում մաշկը: Օգտագործվում է ինչպես ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ լվացման համար, այնպես էլ մարմնի լվացման համար: Օժտված է բակտերիոստատիկ և ֆունգոստատիկ ազդեցությամբ: Փաթեթավորումը - 1 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: Տարան դոզավորող պոմպով է, պոմպի մեկ սեղմումը 2մլ է: Պիտանելիության ժամկետը՝ 3 տարի:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 12.12.2019թ. ներկայացված բողոքը, սույն բողոքի շրջակներում «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառությանին (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

**5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով՝ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիկան նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊԶԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

5	Ախտահանիչ նյութ	<p>Փաթեթավորումը. 1լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարայով: Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի-ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևութային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ, որի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով: PH-5,0-8,0: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս և մաշկի վրա քսվելիս պատկանում է 4-րդ դասի քիչ վնասակար նյութերին, որովայն ներթափանցելիս՝ 5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային ազդեցությունը (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները) և հակամակային ազդեցությունը (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) մինչև 15 րոպեում: Կիրառման նպատակը. նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, երեքը մեկում միաժամանակ: Պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է հակաբակտերիալ վարակազերծումը (ներառյալ տուբերկուլյոզը) 15 րոպեում:</p>
---	-----------------	---

		Պիտանելիության ժամկետները ոչ պակաս քան արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
6	Ախտահան իջ նյութ	Փոշենման 5 կգ-անոց նյութ, ակտիվատորը - տետրաացետիլէթիլենդիամին 25 %, ակլիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ 2.38 %, նատրիումի պերկարբոնատ 47 %, հավելյալ օժանդակ նյութեր, ջրածնային ակտիվության ցուցանիշը՝ PH - 8-ից 10: Առանձնահատկությունները՝ չի ֆիքսում օրգանական ախտոտվածությունը, ազդեցիկ չէ մշակվող մակերեսների հանդեպ: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս պատկանում է 3-րդ դասի վնասակար նյութերին, մաշկի վրա քսվելիս՝ 4-րդ դասի քիչ վտանգավոր նյութերին: Հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ՝ ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները, հակավիրուսային ազդեցությունը՝ արտաընդերային և ընդերային հեպատիտները, հեպատիտ A, B, C, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները, ադենովիրուս, գրիպ, ասիայիկ թոքաբորբ, հակասնկային ազդեցությունը՝ կանդիդա և դերմատոֆիտիա: Կիրառման նպատակը. նախատեսված է վիրահատական սարքավորման (սեղան, զոնդ, ռենտգեն) ախտահանման համար: Պիտանելիության ժամկետները ոչ պակաս քան արտադրողի փակ տարայում՝ 2 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 1 օր: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
7	Ախտահան իջ նյութ	Հաբի քաշը 5գ., որում ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50%-ը: Որպես հավելյալ նյութեր պարունակում է նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որոնք ապահովում են աշխատանքային լուծույթի ակտիվությունը առնվազն 5 օր: 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1.75 գ-ից ոչ պակաս: Հաբերը ինքնալուծվող են: Միջոցը օժտված է հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ: Աշխատանքային լուծույթի մինիմալ ծավալը ոչ ավել, քան 2,5լիտր է: Աշխատանքային լուծույթը միատարր է, չի պարունակում նստվածք, քլորին բնորոշ շատ թույլ հոտով է, աշխատանքային լուծույթը հիմնականում կիրառվում է վիրահատական տարածքներում մշակումների համար և չպետք է առաջացի տեսողական և շնչառական օրգանների գոգոլվածություն: Պետք է լինի գործարանային փակ տուփերով: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
8	Ախտահան իջ նյութ	Ախտահանիչ միջոցը պարունակում է դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ (մինչև 84%) ազդող նյութ, ֆունկցիոնալ հավելումներ՝ ադիպինաթթու, նատրիումի կարբոնատ և բիկարբոնատ Հաբը կշռում է 3,4-3,5գ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5գ ակտիվ քլոր: Հաբերն ինքնալուծվող են: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը 7 օր մեթոդական ցուցումների համաձայն պահպանման դեպքում: Ախտահանիչ միջոցը ցուցաբերում է հակամիկրոբային ազդեցության գրամդրական և գրամբացասական բակտերիաների /ներառյալ տուբերկուլյոզի, ներհիվանդանոցային վարակների, անաէրոբ և հատուկ վտանգավոր ինֆեկցիաների՝ սիբիրյան խոց, ժանտախտ, խոլերա, տուլարեմիա/, սնկերի /այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտներ/, վիրուսների /այդ թվում՝ պոլիոմիելիտ, ՄԻԱՎ, հեպատիտներ, թոչնի գրիպ, ասիայիկ թոքաբորբ, ադենովիրուս և այլն/: Տարբեր վարակների դեպքում ախտահանումը պահանջում է տարբեր ռեժիմներ: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
9	Ախտահան իջ նյութ	Փաթեթավորումը. 1լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարա դիսպենսարով, տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5մլ, մեկ հիգենիկ մշակումը ոչ ավել քան 3մլ- մինչև 30վրկ., մեկ վիրաբուժական մշակումը ոչ ավել քան -6մլ - մինչև 90վրկ., մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում, 1լ նախատեսված է 333

		<p>հիգենիկ կամ 167 վիրաբուժական մշակման համար: Կիրառման նպատակը՝ ձեռքերի հիգիենիկ և վիրաբուժական մշակման համար: Բաղադրակազմը. դենատուրացված էթանոլ 60%-75%, իզոպրոպանոլի առկայության դեպքում՝ քանակը չգերազանցի 5%-ը, պարունակում է խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքստորոպիկ գել, մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝ օժտված բարձր թափանցելիությամբ, տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չպետք է պարունակի հոտավետ բաղադրիչներ: Ախտահանիչ նյութի pH-5,5: Թունավորության և անվտանգության ցուցանիշները՝ 4-րդ, 5-րդ դաս: Ախտահանիչ նյութը պետք է ունենա մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ: Պիտանելիության ժամկետը 3 տարի: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:</p>
10		<p>Փաթեթավորումը - 750 միլիլիտրանոց գործարանային փակ տարայով, ցողացրիչ անվտանգության փականով: Բաղադրությունը - Դիդեցիլդիմեթիլամոնիումիքլորիդ- 0,14%, պոլիհեքսամեթիլենբիզուանիդիդրոքլորիդ- 0,096% և այլ հավելումներ, չպարունակի սպիրտ: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) նկատմամբ և այլ մանրէների նկատմամբ: Հակաբակտերիալ ազդեցությունը՝ Յրոպե, հակավիրուսային ազդեցությունը՝ 5րոպե, հակատուբերկուլյոզային ազդեցությունը՝ 15րոպե: pH-5,0-7,0.: Նախատեսված է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, ստացիոնարներում, լաբորատորիաներում և այլն փոքր մակերես ունեցող առարկաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, բժշկական սարքավորումների (այդ թվում՝ կուվեզներ) և այլ մակերեսների ախտահանման և մաքրման համար: Թունավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:</p>
12	Լուծույթ լվացող	<p>Բաղադրությունը՝ - լվացող բաղադրիչներ՝ լաուրամֆոկարբոքսիլիցինատ, սոդիում լաուրիլսուլֆատ, լինոլեաինաթթվի դիէթանոլամիդ պահպանող բաղադրիչներ՝ բենզիլ սպիրտ, նատրիումի բենզոատ խոնավեցնող բաղադրիչներ՝ գլիցերին պաշտպանող բաղադրիչներ՝ սուլֆոսուլցինատ և այլ հավելումներ: Չի պարունակում ալերգեն սուբստանցիաներ, տրիկլորան: Օգտագործման համար տարիքային սահմանափակում չկա, ամենօրյա օգտագործման դեպքում չի գրգռում մաշկը: Օգտագործվում է ինչպես ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ լվացման համար, այնպես էլ մարմնի լվացման համար: Օժտված է բակտերիոստատիկ և ֆունգոստատիկ ազդեցությամբ: Փաթեթավորումը - 1 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: Տարան դրզավորող պոմպով է պոմպի մեկ սեղմումը 2մլ է: Պիտանելիության ժամկետը՝ 3 տարի:</p>

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 5-10-րդ և 12-րդ չափաբաժինների մասով, գտնում

եմ, որ դրանք համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն

ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ գտնում եմ, որ այն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին:

Դրա հետ մեկտեղ Տեխնիկական բնութագրերում ախտահանիչ միջոցները բնութագրող նյութերը, դրանց դոզաները և միացությունները նշելը չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ, քանի որ գնման առարկայի հատկանիշները պետք է հնարավորինս ներառեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը, որը բխում է Պատվիրատուի գնման պահանջից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 12.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն հրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված  
բողոքներ քննող անձ՝**



**ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**